Կարեն Պոտոսյան
ԵՄՀ իրավագիտության ամբիոնի չորրորդ կուրսի ուսանող

ԻՆՉ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՐՈՂ Է ՈՒՆԵՆԱԼ ՈՒՍԱՆՈՂԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԱԽԱԲԱՆԸ

Սույն հոդվածում ներկայացված է հեղինակի «Կալանավորումը՝ որպես խափանման միջոց» ավարտական աշխատանքի ներածությունը, որը կարող է դիտարկվել որպես նմուշօրինակ այլ ավարտական աշխատանքների կատարման համար:

Հիմնաբառեր. կալանավորում, խափանման միջոց, սահմանադրություն, ազատություն, անձեռնմխելիություն, մարդը որպես բարձրագույն արժեք:

ՆԱԽԱԲԱՆ

Թեմայի արդիականությունը: Սույն աշխատանքը նվիրված է կալանավորմանը, դրա կիրառման պայմաններին, այդ ոլորտում առաջացող խնդիրներին՝ Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) Սահմանադրության[1], ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Քր. Դատ. Օր. .), Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ), Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) նախադեպային իրավունքի համատեքստում, ինչպես նաև՝ կալանավորման հետևանքով անձին ազատությունից զրկելու արդի հիմնախնդիրներին:

Կալանավորման թեման արդիական է այնքանով, որ այն անմիջականորեն ուղղված է և սահմանափակում է անձի ազատությունը, ինչը ներկա դարաշրջանում գտնվում է մարդկության և հասարակության ուշադրության կենտրոնում (թեև ՀՀ Սահմանադրության և Քր. Դատ. Օր. . պայմաններում այն կարող է կիրառվել միայն մեղադրյալի նկատմամբ):

Խափանման միջոցների, մասնավորապես՝ կալանավորման կամ կալանքի կիրառման հիմքերի և էության վերլուծությամբ հնուց ի վեր զբաղվել են բազմաթիվ իրավաբան գիտնականներ, արդարադատություն իրականացնող պրակտիկ գործիչներ և այլոք:

Դեռևս 20-րդ դարի սկզբներին ռուս նշանավոր իրավագետ Ն.Պոլյանսկին նշել է, որ խափանման միջոցի ընտրության թույլատրելիությունը քրեական դատավարության կարևորագույն հարցերից է, քանի որ օրենսդրության մեջ որոշակի

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն ընդունված 05.07.1995, ՀՀ ՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118, փոփոխություններով և լրացումներով առ 06.12.2015:

հարցերի բացակայությունը վտանգի է ենթարկում քաղաքացու անձնական ազատությունը: Խնդիրը հետաքրքրել և հուզել է իրավաբաններին և հասարակությանն այն առումով, որ կալանավորումն անմիջականորեն առնչվում է մարդու անօտարելի իրավունքներից մեկին, թերևս ամենաառաջնայինին՝ նրա ազատությանը և իրավունքների պաշտպանությանը, քանի որ կալանավորումը բերում է անձի ազատությունների ու իրավունքների կտրուկ սահմանափակման:

Հասարակությունից մեկուսացումը նաև լրջորեն ազդում է անձի հոգեբանական խառնվածքի և վարքագծերի վրա: Բարոյական և հոգեկան հուսալքությունը, հատկապես խափանման հիշյալ միջոցի ոչ իրավաչափ գործադրման դեպքում, մեղադրյալին կարող են հասցնել ֆիզիկական և հոգեկան տառապանքների, հասարակությունից մեկուսացման, ապագայի նկատմամբ վստահության կորստի և այլ բացասական, երբեմն նաև՝ անդառնալի հետևանքների:

Խնդրի բարդությունը կայանում է նաև նրանում, որ, գործնականում օրենքով սահմանված կարգը ոչ հազվադեպ ճիշտ չի կիրառվում, առավել ևս երբեմն կոպիտ խախտվում է անկախ այն հանգամանքից, որ տեսական իրավաբանությունը հասել է զգալի հաջողությունների, մասնավորապես, մարդու ազատություն եզրույթը պարզաբանել և քննարկման առարկա են դարձրել բազում նշանավոր իրավագետներ, մեկնաբանվել են եվրոպական դատարանի որոշումներում և միջազգային տարբեր կոնվենցիաների դրույթներում և դրանց համահունչ դարձրած ներպետական օրենսդրական ակտերում:

Վերոգրյալի համատեքստում հատկանշական է այն հանգամանքը, որ մարդու ազատության հետ կապված օրենսդրական համակարգը ոչ միայն մեր, այլև աշխարհի բազմաթիվ երկրների իրավական համակարգերում պարբերաբար վերանայվում և ենթարկվում է փոփոխությունների՝ հաշվի առնելով առաջադեմ մարդկության իրավական համակարգի արդիականացումը, փորձը, առկա պրակտիկան և մարտահրավերները: Այսպես, անձի անձեռնմխելիության, ազատությունների և իրավունքների պաշտպանության շահերից ելնելով Քր.Դատ.Օր. . հանգամանորեն հաշվի է առել եվրոպական դատարանի փորձը, իրավունքների խախտման վերաբերյալ հիմնավորված եզրակացությունները, ՄԻԵԿ 5-րդ հոդվածի դրույթները[2] և առաջին հերթին՝ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի պահանջը: Արդյունքում օրենսգրքի համապատասխան հոդվածներով (11-րդ, 134-138-րդ, 142-րդ, 285-288-րդ, 403-րդ և այն) ավելի հստակ և մանրամասն է կարգավորվում խափանման միջոցների, մասնավորապես՝ կալանավորման կիրառումը:

Իրավական համակարգի արդիականացման և միջազգային ստանդարտներին ու նորմերին համապատասխանեցման համատեքստում արժե ընդգծել նաև այն փաստը, որ ներկայում ՀՀ-ում ակտիվ կերպով ընթանում են դատաիրավական բարեփոխումներ, որոնց նպատակը ներպետական իրավական համակարգի և, մասնավորապես, քրեական արդարադատության ժողովրդավարացման, ինչպես նաև անձի իրավունքների արդյունավետ պաշտպանության ապահովումը:

Իրավաչափ պետության անբաժան հատկանիշներից մեկն օրենքի գերակայությունն է, պետական մարմինների, պաշտոնատար անձանց և անձի (այդ թվում՝ մեղադրյալի) փոխհարաբերություններում կամայականության և ապօրինու-

[2] Տե՛ս Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունների եվրոպական կոնվենցիա, ընդունված 04.11.2000, ուժի մեջ մտած 01.04.2005:

թյունների անթույլատրելիությունը, ինչպես նաև՝ պետական հարկադրանքի սահմանափակումը միայն այն դեպքերով, երբ, իրոք, այն անհրաժեշտ է հասարակության և այլ անձանց շահերի պաշտպանության համար:

Քրեական գործերի քննության ընթացքում դատավարական հարկադրանքի միջոցները կիրառելիս առանձնապես սուր դրսևորվում է ստանում Քր.Դատ.Օր-ով սահմանված երկու հիմնական հակադրությունների՝ հանրային և մասնավոր շահերի բախումը: Մի կողմից մեղադրյալի նկատմամբ կալանավորման միջոցի ընտրությունը պայմանավորված է քրեական դատավարության խնդիրների լուծման պատշաճ հնարավորություն ապահովելու անհրաժեշտությամբ, իսկ մյուս կողմից դա հակասում է իր իրավունքների և ազատությունների սահմանափակում թույլ չտալու անձի շահագրգռվածությանը: Այս հակասությունները ստիպում են գտնել փոխզիջումային լուծումներ քրեական դատավարությունում անձի, հասարակության և պետության շահերի հավասարակշռված և իրավաչափ պաշտպանության համար:

Ըստ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի մարդու անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի կարևորագույն երաշխիքն օրենքն է, որով պետք է սահմանվեն և որին համապատասխան պետք է իրականացվեն մարդուն ազատությունից զրկելու դեպքերը և ընթացակարգը: Ազատությունից զրկելու անհիմն, իրավախախտ դեպքերը կանխելու նպատակով ՀՀ Սահմանադրությունը սահմանում է այն դեպքերը, որոնց հիման վրա օրենքը կարող է նախատեսել ազատությունից զրկելը: Հիմքերի սպառիչ շրջանակը և հստակ իրավական ձևակերպումը բացառում են դրանց տարածական մեկնաբանությունը:

Ելնելով վերոնշյալ հանգամանքներից և իրավական նորմերի պահանջներից՝ կարելի է փաստել, որ իրավական համակարգի արդիականացման, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ոլորտում զարգացումը նոր մարտահրավերներ է առաջադրում իրավունքի ոլորտի մասնագետների առջև, այդ թվում՝ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու պայմանների և ոլորտը կարգավորող օրենքների միատեսակ կիրառման համատեքստում:

Այսպիսով, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշպանության տեսանկյունից կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու իրավական նորմի բարեփոխումը և օրենքի կիրառման պայմանների արդիականացումը այսօր դարձել են խիստ արդիական: Սա պայմանավորված է ոչ միայն գործնական ոլորտում առաջացող խնդիրների, այլև մարդկանց իրավագիտակցության բարձրացման ու մարդուն որպես բարձրագույն արժեք դիտարկելու անխուսափելի պահանջի հետ:

Ուստի, գտնում ենք, որ որպես խափանման միջոց՝ կալանավորման հիմնախնդիրը շարունակում է մնալ հրատապ, իսկ արդիականացման և բարեփոխումների հրամայականը, հատկապես ՀՀ օրենսդրական համակարգում՝ անխուսափելի և պարտադիր: Այս ամենի համատեքստում մեր նպատակն է մեր համեստ ներդրումն ունենալ տվյալ որոտում նոր մոտեցումներ առաջադրելու գործում՝ հիմնված փորձի, առկա ձեռքբերումների և օրենսդրական կարգավորումների վրա:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Աշխատանքի նպատակն է սույն աշխատության մեջ առաջադրել նոր մոտեցումներ, որոնք, հուսով ենք, հետագայում վերլուծության կենթարկվեն իրավաբան-գիտնականների կողմից և հնարավորության կտան օգտագործել մեր կողմից առաջադրված մոտեցումները իրավա-

կիրառ պրակտիկայում՝ անդրադառնալով ինչպես կալանավորման կիրառման պայմաններին, այնպես էլ՝ կալանավորման և անձին ազատությունից զրկելու արդի հիմնախնդիրներին:

Ի լրումն, մենք կարծում ենք, որ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ ներկա իրավական կարգավորումները որոշ առումներով չեն բավարարում և ընդհանրացնում գործնական ոլորտում առաջացող հիմնախնդիրները, որն էլ ոչ հազվադեպ իրավակիրառ պրակտիկայում լուրջ բարդությունների պատճառ է դառնում:

Ավարտական աշխատանքի ուսումնասիրության օբյեկտը և առարկան: Սույն աշխատանքի ուսումնասիրության օբյեկտը կալանավորման՝ որպես խափանման միջոցի կիրառումն է: Ուստի տեղին ենք համարում փաստել, որ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու բարեփոխման պահանջը և անհրաժեշտությունը առավել քան հրատապ են, հետևաբար, սույն աշխատության տարբեր գլուխներում կանդրադառնանք և կվերլուծենք ներկայացվող թեմայի վերաբերյալ առկա օրենսդրական ձեռքբերումները և այլ հիմնական գործոններ:

Հետազոտության տեսամեթոդական հիմքը և տեղեկատվության ապահովումը: Հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել քրեական դատավարության խափանման միջոցներից կալանավորման վերաբերյալ օրենսդրական ոլորտը կարգավորող Քր.Դատ.Օր-ը, ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները, ՄԻԵԴ վճիռները, իրավագիտության ոլորտի հայրենական և արտասահմանյան տարբեր տեսաբանների և գործնական կիրառողների մոտեցումները՝ համեմատական վերլուծության մեթոդի հիման վրա ցույց տալով տվյալ ոլորտում ՀՀ օրենսդրական համակարգի առկա վիճակը, տարբեր երկրների իրավակիրառ պրակտիկայի հետ առկա նմանությունները և տարբերությունները, և դրանց հիման ոլորտի հետագա կատարելագործման հավանական իրավական ուղիները:

Հետազոտության կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից, առաջարկություններից և օգտագործված գրականության ցանկից:

Карен Потосян
Студент 4-ого курса юридической кафедры Международного университета Евразия

КАКОЕ СОДЕРЖАНИЕ МОЖЕТ ИМЕТЬ ВВЕДЕНИЕ ДИПЛОМНОЙ РАБОТЫ

В данной статье представлено введение дипломной работы автора на тему «Арест как мера пресечения», которое может служить типичным примером для выполнения других выпускных работ.

Ключевые слова: арест, мера пресечения, конституция, свобода, неприкосновенность, человек как высшая ценность.

Karen Potosyan
BA 4th year student, Department of Law, Eurasia International University

THE CONTENT OF FINAL DIPLOMA THESIS INTRODUCTION

The article is a manifestation of the diploma thesis introduction on the topic “Detention as a precautionary measure “. It can typically serve as a sample of final papers introduction formation.

Key Words: arrest, measure of restriction, constitution, freedom, integrity, human being as a highest value.